Հավելված

ՀՓՀ հոգաբարձուների խորհրդի
2018 թ. սեպտեմբերի 01-ի նիստում
ընդունված N 1 որոշման

ՀՓՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «Հարթակների փոխակերման» իրավաստեղծ գործունեության հիմնադրամի (այսուհետ՝ ՀՓՀ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի, քարտուղարի և անդամների իրավասությունը, նիստերի նախապատրաստման, գումարման, անցկացման, քվեարկության, նիստերի արձանագրման, որոշումների ընդունման կարգը:

1.2. ՀՓՀ կանոնադրության 4.7-րդ կետի համաձայն՝ խորհրդի կանոնակարգը հաստատում է Խորհուրդը:

1.3. Խորհրդի աշխատանքների հետ կապված ծախսերը կատարվում են ՀՓՀ միջոցների հաշվին:

2. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Խորհուրդը ՀՓՀ բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինն է, որը ստեղծվում է 2 (երկու) տարի ժամկետով, հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան:

2.2. Խորհուրդն ունի նախագահ և քարտուղար: Ըստ անհրաժեշտության՝ խորհուրդը ձևավորում է ժամանակավոր հանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր, որոնք ուսումնասիրում են առաջադրված հարցերը, պատրաստում նախագծեր և դրանք ներկայացնում Խորհրդին:

2.3. Խորհուրդը ձևավորվելուց հետո իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար: Խորհրդի նախագահը չի կարող լինել նույն հիմնադրամում հաստիքային աշխատող, իրավունք ունի նույն հիմնադրամում լինել փորձագետ:

2.4. Խորհրդի իրավասությունն է՝

1) իր կանոնակարգի հաստատումը,

2) տնօրենի ընտրության և լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

3) տնօրենի տարեկան հաշվետվության լսումն ու գնահատումը,

4) ՀՓՀ գործունեության տարեկան և ռազմավարական ծրագրերի հաստատումը,

5) ՀՓՀ կառուցվածքի հաստատումը,
6) ՀՓՀ հաստիքացուցակի հաստատումը,
7) ՀՓՀ բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվության ու ՀՓՀ գործունեության մասին տարեկան հաշվետվության հաստատումը,
8) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,
9) ՀՓՀ գործունեության, այդ թվում՝ ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը, ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի ընտրությունը,
10) Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,
11) տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանների, հրահանգների և ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչելը,
12) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,
13) ՀՓՀ լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,
14) ՀՓՀ լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
15) ՀՓՀ կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխության, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,
16) ՀՓՀ գույքի տնօրինման կարգի հաստատումը,
17) ՀՓՀ վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
18) ՀՓՀ-ի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
19) օրենքով, սույն կանոնակարգով նախատեսված, ինչպես նաև ՀՓՀ մյուս մարմիններին օրենքով չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

Խորհրդի իրավասությանը պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

2.5. Խորհրդի նախագահը՝
1) հրավիրում է խորհրդի նիստերը և նախագահում դրանք,
2) ստորագրում է խորհրդի որոշումները,
3) խորհրդի համաձայնությամբ՝ կարող է ստեղծել հանձնախմբեր և նշանակել դրանց նախագահներին,
4) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրության վարումը,
5) խորհրդի քննարկմանն է ներկայացնում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծը,
6) ՀՓՀ անունից տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

2.6. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում՝ նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է խորհուրդը:

2.7. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,

2) նախապատրաստելու և խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ, որոշումների նախագծեր,

3) ստանալու տեղեկություններ ՀՓՀ գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի մասին,

4) ստանալու իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում,

5) ներգրավվել ՀՓՀ-ի ծրագրերում ինչպես հաստիքային աշխատող, այնպես էլ՝ փորձագետ և վարձատրվել տվյալ գործառույթների կատարման համար:

2.8. Խորհրդի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել խորհրդի նիստերին,

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ՀՀ և մասնավորապես ՀՓՀ շահերից,

3) հոգալ ՀՓՀ-ի հեղինակության բարձրացման մասին,

4) աջակցել ՀՓՀ ներդրումների համալրմանը:

2.9. Խորհրդի անդամի լիազորությունը խորհրդի որոշմամբ դադարում է՝

1) իր դիմումի համաձայն,

2) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում,

4) եթե դադարել են խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները,

5) պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4 ով,

6) նրա մահվան դեպքում:

2.10. Խորհրդի քարտուղարը՝

1) ծանուցում է խորհրդի անդամներին նիստի օրվա, տեղի և օրակարգի մասին,

2) գրանցում է խորհրդի՝ նիստին մասնակցող անդամներին,

3) կազմում և ստորագրում է խորհրդի նիստերի արձանագրությունները,

4) կատարում է սույն կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

3. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

3.1. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում և աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

3.2. Խորհրդի նիստերը գումարվում են տարեկան երկու անգամ՝ խորհրդի նախագահի կողմից:

3.3. Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում:
3.4. Խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:
3.5. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:
3.6. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Եթե խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:
3.7. Նիստերը նախապատրաստում են խորհրդի նախագահը և քարտուղարը՝ անհրաժեշտության դեպքում այդ աշխատանքներին ներգրավելով խորհրդի մյուս անդամներին:
3.8. Խորհրդի առաջին նիստը մինչև նախագահի ընտրությունը նախագահում է ՀՓՀ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը, քարտուղարում՝ խորհրդի հիմնադիր-անդամը:
3.9. Խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև խորհրդի անդամներից մեկի պահանջով:
3.10. Խորհրդի անդամներից մեկի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողի սահմանած ժամկետում և օրակարգով: Խորհրդի նախագահը գրավոր պահանջը ստանալու պահից երկու օրվա ընթացքում պետք է ընդունի խորհրդի նիստ գումարելու մասին որոշում: Նիստի հրավիրման և օրակարգի մասին խորհրդի քարտուղարը խորհրդի անդամներին տեղեկացնում է առնվազն երեք օր առաջ՝ հեռախոսազանգի, կամ էլեկտրոնային հաղորդագրության, կամ գրավոր:

4. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4.1. Խորհրդի նախագահը, բացելով խորհրդի նիստը, հայտարարում է քվեակազմի առկայությունը և քվեարկության դնում օրակարգը:
4.2. Խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:
4.3. Օրակարգի հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ելույթների տևողությունը որոշում է խորհուրդը:

5. ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե ՀՓՀ կանոնադրությամբ, սույն կանոնակարգով կամ եթե խորհրդի որոշմամբ քվեարկության այլ կարգ չի սահմանվել:
5.2. Խորհուրդը կարող է ընդունել որոշում փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու մասին:

5.3. Փակ, գաղտնի քվեարկության քվեաթերթիկները պատրաստվում են խորհրդի քարտուղարի կողմից:

6. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

6.1 . Խորհրդի հանձաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է խորհուրդը:
6.2. Խորհրդի հանձաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովի արձանագրության մեջ մտցնել հատուկ կարծիք և այդ մասին տեղյակ պահել խորհրդին:

7. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Խորհրդի արձանագրությունը կազմում է խորհրդի քարտուղարը խորհրդի նիստը ավարտվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում: Արձանագրությունը ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:
7.2. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ժամանակը, քվեակազմը, նախագահը, քարտուղարը, օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները:

8. ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

8.1. Խորհրդի որոշումները կենսագործվում են ՀՓՀ տնօրենի հրամաններով: